«ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ»

“ARAVOD LOUSSO”

HYMNE DU MATIN

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

St. NERSÈS CHNORHALI

Պէյրութ - Beyrouth

2017

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

«ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ»

St. NERSÈS CHNORHALI

“ARAVOD LOUSSO”

HYMNE DU MATIN

Ս. Ներսէս, Շնորհալի՝ կոչուած իր բարութեան եւ բացառիկ հեզութեան համար, Պահլաւունեաց՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի ցեղէն՝ Ապիրատ իշխանին երկրորդ որդին էր, ծնած 1102ին։ Ժամանակակից էր Սուրբ Բեռնարդոսի։

Իր մեծ եղբայրը Գրիգորիս կաթողիկոս, իր քով առաւ Ներսէսը որ փոքր տարիքէն բացառիկ հանճար եւ սրբութիւն ցոյց կու տար։ Յանձնեց զայն ժամանակի գիտուն վարդապետներուն դաստիարակութեան։ Շուտով ձեռնադրեց սարկաւագ, եւ ապա բարձրացուց՝ քահանայական աստիճանին։

Ս. Ներսէս սկսաւ բարենորոգել եկեղեցւոյ հին կարգերը հոգեւոր նուագներով եւ ճոխացուց Հայաստանեայց եկեղեցւոյ չարականները։ Գրեց ժողովուրդին համար առակներ, Եդեսիոյ քաղաքին կործանման Ողբը, եւ հայոց պատմութիւնը ոտանաւոր չափով։ Յոյն իշխանագունին խնդրանքով, գրեց Հայ Եկեղեցւոյ դաւանանքը։ Կիւ Մանուէլ Բիւզանդիոնի կայսրը, ուրախացած ղրկեց իր ներկայացուցիչ Թէորիանոսը որպէսզի երկու Եկեղեցիներու կրօնական միութեան աշխատանք տարուի։

Երբ Թէորիանոս հասաւ Ս. Ներսէս Կաթողիկոսական Աթոռ բարձրացած էր իր եղբօր տեղ։

Երկար եւ սիրով բանակցեցան։ Բայց ափսոս հասաւ Ս. Ներսէսի մահը 1173-ին։

Իր սուրբի համբաւը ոչ միայն հայ ժողովուրդին, այլ մինչեւ Բիւզանդիոնի աշխարհին մէջ կը հնչէր։

Ս. Ներսէս Շնորհալի Հայ Եկեղեցւոյ հայրապետներուն ամենէն սիրելի դէմքերէն մէկը կը մնայ։

Այս հատորիկին մէջ կը ներկայացուի «Առաւօտ լուսոյ», Արեւագալի «Լոյս» աղօթքը եւ Ս. Աստուածածնի նուիրուած աղօթք մը։ Ֆրանսերէնի թարգմանութիւնը կատարած է, Հայր Սահակ Քէչիչեան։

Saint Nersès, né en 1102 et nommé Chnorhali (Le Gracieux) pour sa bonté et sa mansuétude exceptionnelle, est le second des fils du Prince Apirat Pahlavouni de la descendance de Saint Grégoire l'Illuminateur. Il est contemporain à Saint Bernard. Dans sa tendre jeunesse, son grand frère Grigoris, Catholicos de tous les Arméniens, prend soin personnellement de l'enfant qui montrait un génie précoce et exceptionnel et une tendance poussée vers la sainteté. Pour ces raisons, il le confie à des grands savants de son époque afin qu'ils l'instruisent dans tous les domaines de la science et de la religion. Il fut ordonné très jeune diacre, prêtre et évêque.

Dès le début de son activité pastorale il commença par le rénovation de l'Office Divin en y ajoutant de nouveaux cantiques spirituels, et par l'enrichissement de l'hymnaire déjà bien fourni de l'Eglise Arménienne. Il écriva des fables pour le peuple, la fameuse "lamentation d'Edesse", lors de la destruction de la ville, ainsi qu'une histoire d'Arménie tout en vers. À la demande d'un Prince Grec, il rédigea la profession de foi de l'Eglise Arménienne. L'Empereur de Bysance, Cyr Manuel, enchanté de cette profession de foi, envoya son propre représentant Théorianos, afin de réaliser l'union des deux Eglises. À l'arrivée de celui-ci en Cilicie d'Arménie, Nersès Chnorhali avait succédé à son frère sur le Siège du Catholicosat de Cilicie. Les pourparlers furent très longs mais cordiaux. Hélas la mort de Nersès Chnorhali en 1173, mit fin à ces dialogues bénéfiques.

Sa renommée de Saint fur reconnue non seulement par son propre peuple, mais elle arriva jusqu'à Bysance aussi.

Saint Nersès Chnorhali reste toujours comme une des figures les plus aimées des Patriarches de l'Eglise Arménienne.

En ce volume sont regroupées trois hymnes: 1) "Aravod Lousso" ("Aurore de Lumière"); 2) "Louys" ("Lumière"); 3) Une hymne dédiée à la Sainte Vierge Marie. Les traductions en français sont réalisées par le R. P. Isaac Kéchichian. S.J.

ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա։

Բղխումն ի Հօրէ,
Բղխեա ի հոգւոյս
Բան քեզ ի հաճոյս։

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գրտող զիս արա։

Դուռն ողորմութեան
Դաւանողիս բաց,
Դասեցո վերնոց։

HYMNE DU MATIN

Aurore lumineuse,
Soleil de justice,
Fais luire en moi ta lumière.

Jaillissement du Père,
Fais jaillir de mon cœur
Une parole qui Te plaise.

Ô Toi, Trésor de miséricorde,
Toi, Trésor caché,
Que je Te trouve !

Porte de miséricorde,
À moi qui Te proclame, ouvre-la ;
Place-moi avec ceux d'en haut.

Երբեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա։

Զարթիր Տէր յօգնել.
Զարթո ըզթըմբրեալս,
Զուարթնոց նըմանել։

Էդ Հայր անըսկիզբն,
Էակից Որդի,
Է միշտ սուրբ Հոգի։

Ընկալ զիս գրթած,
Ընկալ ողորմած,
Ընկալ մարդասէր։

Ô Unité Trine,
Toi qui prends soin des créatures,
Aie pitié de moi aussi.

Éveille-Toi, Seigneur, pour m'aider ;
Réveille-moi qui suis assoupi,
Pour imiter les Vigilants.

"Toi qui es", Père sans commencement,
"Toi qui es", Fils consubstantiel,
"Toi qui es toujours", Saint-Esprit,

Accueille-moi, ô Clément,
Accueille-moi, ô Miséricordieux,
Accueille-moi, ô Ami des hommes.

Թագաւոր փառաց,
Թողութեանց տուող,
Թող ինձ ըզյանցանս։

Ժողովող բարեաց,
Ժողովեա եւ զիս
Ժողովս անդրանկաց։

Ի քէն Տէր հայցեմ,
Ի մարդասիրէդ
Ինձ բըժըշկութիւն։

Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս։

Ô Roi de gloire,
Ô Donneur de pardons,
Pardonne-moi mes fautes.

Toi qui rassembles les bons,
Réunis-moi, moi aussi,
À l'Assemblée des Élus.

De Toi, Seigneur, j'implore,
De Toi, ami des hommes,
J'implore ma guérison.

Pour moi, mort, sois Vie ;
Pour moi, enténébré, sois Lumière,
Ô Toi qui ôtes la douleur.

Խորհրդոց գիտող,
Խաւարիս չնորհեա
Խորհուրդ լուսաւոր։

Ծընունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա լոյս փառաց։

Կենարար Փրկիչ,
Կեցո ըզմեռեալս,
Կանգնեա զգըլորեալս։

Հաստեա հաւատով,
Հաստատեա յուսով,
Հիմնեցո սիրով։

Toi qui connais les pensées,
Accorde-moi, à moi, ténèbres,
Une pensée lumineuse.

Ô Toi, engendré du sein du Père,
En moi, couvert d'obscurité,
Fais luire la lumière de gloire.

Ô Sauveur, Source de Vie,
Vivifie-moi, moi qui suis mort ;
Relève-moi, moi qui suis tombé.

Affermis-moi par la Foi,
Consolide-moi par l'Espérance,
Fonde-moi dans la Charité.

Յիսուսի Պայծառակերպութիւնը

La Transfiguration

Յիսուս Ս. Հաղորդութիւնը կը հաստատէ

L’Institution de l’Eucharistie

Զայնիւս աղաչեմ,
Զեռօքս պաղատիմ,
Զիր բարեաց չնորհեա։

Ղամբարմամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո։

Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցոյց
Ճեմել ի յերկինս։

Միածինըդ Հօր,
Մոյծ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ։

Avec ma voix je Te supplie,
Avec mes mains je T'implore,
Accorde-moi le don de tes bienfaits.

Par ton illumination,
Ô excellent Pilote,
Fortifie-moi, moi qui vais à la dérive.

Ô Rayon de gloire,
Montre-moi le chemin
Pour aller au ciel.

Ô Toi, Fils Unique du Père,
Introduis-moi dans la chambre
De tes chastes noces.

Յորժամ գաս փառօք
Յահագին աւուրն,
Յիշեա զիս Քրիստոս։

Նորոգող հնութեանց,
Նորոգեա եւ զիս,
Նորոգ զարդարեա։

Շնորհատու բարեաց,
Շնորհեա զքաւութիւն,
Շնորհեա զթողութիւն։

Ուրախացո Տէր
Ոգւոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ։

Lorsque Tu viendras en gloire
Au Jour redoutable,
Souviens-Toi de moi, ô Christ !

Toi qui rénoves les vétustés,
Renouvelle-moi, moi aussi,
Embellis-moi de nouveau.

Ô Donateur de biens,
Accorde-moi la propitiation,
Accorde-moi le pardon.

Rends-moi la joie, ô Seigneur,
En sauvant mon âme,
Moi qui suis en deuil.

Զար մըշակողին
Զար սերմանցն որ յիս՝
Զորացո գպըտուղ։

Պարգեւիչ բարեաց,
Պարգեւեա իմոց
Պարտեաց թողութիւն։

Զուր չնորհեա աչացս,
Ջերմ հեղուլ արտօսր,
Զընջել ըզյանցանս։

Ռետինըդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո,
Ռահ ցոյց ինձ լուսոյ։

Du Semeur méchant,
De ses semailles mauvaises,
Dessèche en moi le fruit.

Toi qui accordes des biens,
Fais-moi remise
De mes dettes.

Donne la rosée à mes yeux
Pour verser des larmes brûlantes
Qui effaceront mes fautes.

Ô Toi, Résine savoureuse,
Enivre mon âme mesquine,
Montre-moi un sentier de lumière.

Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճըմլեա
Սիրտ իմ քարեղէն։

Վասն գըթութեան,
Վասն ողորմութեան,
Վերըստին կեցո։

Տենչալի տեսլեամբ
Տուր ինձ յաղենալ,
Տէր Յիսուս Քրիստոս։

Բաբուն երկնաւոր,
Ոտեա զաշակերտս
Բամից երկնայնոց։

Jésus dont le Nom est Amour,
Par ton Amour amollis
Mon cœur de pierre.

Au nom de ta pitié,
Au nom de ta miséricorde,
Rends-moi une vie nouvelle.

De ta vue ardemment désirée
Veuille donc me rassasier,
Ô Seigneur Jésus-Christ.

Ô Maître du ciel,
Agrège-moi, moi ton disciple
Aux troupes célestes.

Յօղ արեան քոյ Տէր
Յօղեա ի հոգիս,
Յնծասցէ անձն իմ։

Իւծեալքս մեղօք
Իւծեալ աղաչեմ,
Իւսեա յիս բարիս։

Փրկիչ բոլորից,
Փութա զիս փրկել
Փորձութեանց մեղաց։

Քաւիչ յանցանաց,
Քաւեա զօրհնաբանս
Քեզ երգել ըգփառս։

Աստուածածնին
բարեխօսութեամբ
Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա։

La rosée de ton sang, ô Seigneur
Répands-la sur mon âme,
Pour qu'exulte de joie mon esprit.

Usé à cause de mes péchés,
Je Te supplie, moi débile,
Tisse en moi tes bienfaits,

Ô Sauveur universel,
Hâte-Toi de me délivrer
Des tentations du péché.

Ô Toi qui expies les fautes,
À moi qui Te loue, montre-Toi propice,
Pour que je chante ta gloire !

Par l'intercession de la Mère de Dieu
Souviens-Toi, Seigneur, et aie pitié !

Ս. Հոգին կ՚իջնէ Ս. Կոյս Մարիամ Աստուածածնի եւ Առաքեալներուն վրայ

La Pentecôte

Աստուածածնի Վերափոխումը

L’Assomption de la Vierge Marie

Տաղ՝ Արեւագալի Ժամերգութեան

Լոյս,
արարիչ լուսոյ,
առաջին լոյս՝
ընակեալդ ի լոյս յանմատոյց՝
Հայր երկնաւոր,
ի դասուց լուսեղինացն օրհնեալ.

ի ծագել լուսոյ առաւօտուս՝
ծագեա ի հոգիս մեր
ըզլոյս քո իմանալի։

Լոյս,
ի լուսոյ ծագումն՝
արեգակն արդար,
անճառ ծնունդ Հօր՝ Որդի,
յառաջ քան զարեւ անուն քո
գովեալ ընդ Հօր.

ի ծագել լուսոյ առաւօտուս՝
ծագեա ի հոգիս մեր
ըզլոյս քո իմանալի։

HYMNE, AU LEVER DU SOLEIL

Lumière,
Créateur de lumière,
première lumière,
Toi qui habites une lumière inaccessible,
ô Père celeste,
béni par les chœurs des êtres de lumière ;

alors que point la lumière de cette aurore,
fais poindre en nos âmes
ta lumière spirituelle.

Lumière,
jaillie de la Lumière,
Soleil de justice,
Toi qui es né d'une manière indicible
du Père, ô Fils,
avant que n'existe le soleil
ton Nom est loué avec le Père ;

alors que point la lumière de cette aurore,
fais poindre en nos âmes
ta lumière spirituelle.

Լոյս ի Հօրէ բղխումն
աղբիւր բարութեան՝
Հոգիդ սուրբ Աստուծոյ,
մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս
ըզքեզ բարեբանեն.

ի ծագել լուսոյ առաւօտուս
ծագեա ի հոգիս մեր
ըզլոյս քո իմանալի։

Լոյս երրեակ եւ մի
անբաժանելի սուրբ Երրորդութիւն,
ըզքեզ ընդ երկնայնոցն
երկրածինքս միշտ փառաւորեմք.

ի ծագել լուսոյ առաւօտուս
ծագեա ի հոգիս մեր
ըզլոյս քո իմանալի։

Lumière,
qui procèdes du Père,
Source de bonté,
ô Toi, Esprit Saint de Dieu,
les enfants de l'Église
avec les Anges T'exaltent ;

alors que point la lumière de cette aurore,
fais poindre en nos âmes
ta lumière sprituelle.

Lumière trine et une,
ô Sainte et indivisible Trinité,
avec les êtres célestes,
nous autres, nés de la terre
toujours nous Te glorifions ;

alors que point la lumière de cette aurore,
fais poindre en nos âmes
ta lumière spirituelle.

Տաղ՝ առ Սուրբ Կոյսն

Աստուածատունկ խընկաբեր ծառ
յանուշահոտ բուրաստանէն
որ ի գնացս Հոգւոյն
վրտակաց տընկեցար.
եւ զանմահութեան պըտուղն
ի ժամու ետուր մեզ.
վասն որոյ ամենեքեան
ըզքեզ միշտ մեծացուցանեմք։

Զանապական բողբոջն.
յաստուածային դրախտէն
յորովայն քո տընկեալ
բրդխեցեր յարմատոյն Յեսսեայ
ծաղիկ վայելուչ
կուսական ծնընդեամբ.
վասն որոյ ամենեքեան
ըզքեզ միշտ մեծացուցանեմք։

Յարփւոյն լուսոյ ծագումն
ի քեզ վառեաց ըզճրագ մարմնոյն
լոյս աշխարհի որով գտեալ
զպատկերն իւրական
զոր վերըստին նորոգեաց
յառաջին կերպարանն.
վասն որոյ բարեխօսեա
նորոգել ըզմեզ ի հնութենէ մեղաց։

HYMNE À LA VIERGE

Arbre planté par Dieu et producteur d'encens,
toi qui fus transplanté du jardin parfumé
dans le courant des ruisseaux de l'Esprit
tu nous as donné, en son temps,
le fruit de l'immortalité :
c'est pourquoi, nous t'exaltons tous à jamais !

Le Bourgeon incorruptible,
transplanté du Paradis divin en ton sein,
tu l'as fais sourdre de la racine de Jessé
en une Fleur gracieuse,
par un enfantement virginal :
c'est pourquoi, nous t'exaltons tous à jamais !

Celui qui a jailli de l'Astre de lumière
a allumé en toi la lampe de (son) corps,
comme lumière du monde ;
par elle Il a retrouvé sa propre image
qu'll a renouvelée en sa forme première :

c'est pourquoi, sois notre Avocate
pour nous renouveler de la vétusté du péché !

Հրատարակութիւն՝
Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան
Պէյրութ 2017

Publié par :
Le Patriarcat Arménien Catholique
Beyrouth 2017

Մանրանկարները առնուած են Զմմառու Մատենադարանի
մագաղաթեայ Աւետարանէ մը, ԺԶ. դար, Գաղատիա։

Les reproductions sont extraites d'un manuscrit du XVI s. de Galatie, conservé dans la bibliothèque du couvent arménien de Bzommar (Liban).

Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւն

Patriarcat Arménien Catholique